կատարեալ ուսումնասիրութիւնն այժմ դեռ կարելի չէ։ Եւ եթէ հիմա նորից ձեռնարկում ենք այդ, այդ միայն նրա համար, որ կարծում ենք ժամանակ է այս խնդիրն անուշադիր չթողնել»[1]։

Ապա շեշտելով նոր փոփոխակների կարևորութիւնը շարունակում է. «Ժողովրդական պատմուածքի, առանձնապէս վէպի վերաբերեալ ոչ մի բան անուշադիր չպիտի թողնել։ Ինչքան էլ նման պատմուածքներ տպուած լինին, նոր պատմուածքը միշտ մի որ և է նորութիւն, կեանքի մի գիծ, սովորութիւն կամ հաւատալիք, ժողովրդական մի նոր աշխարհայեցողութիւն և այլն մէջ կը բերէ։ Էլ չենք ասում թէ նոր պատմուածքի մէջ կարող են այս կամ այն դիպուածը փոքր ինչ ուրիշ տեսակ պատմուած լինել՝ որով մի պատմական յիշողութիւն կամ առասպել աւելի կարող են պարզուել։ Որքան էլ աղճատուած և աննշան երևան և նոյն իսկ անիմաստ թուին վէպի պատմուածքները,—ինչպէս և ամեն ժողովրդական բանահիւսութեան արդիւնք,—դարձեալ ունեն իրենց արժէքը։ Մի բառ, մի խօսք մի յատուկ անուն լոկ կարող է երբեմն բանալ ուսումնասիրութեան առաջ մի ամբողջ պատմական դիպուած, մի հնացած պատմական երևոյթ և աւելի ևս հասկանալի դարձնել վէպը։ Կատարեալ ուսումնասիրութեան համար ոչ մի պատմուածք անուշադիր չպիտի թողնել, ուստի և անհրաժեշտ է, որ շատ տեղերի և բազմաթիւ պատմուածքներ ունենանք»[2]։

Ընդունելով հանդերձ այս դիտողութեանց ճշտութիւնը պէտք է սակայն խնայել և ժամանակն ու աշխատանքը. և նոյն իսկ ուսումնասիրութեան գործը դիւրացնելու համար մենք պէտք է փոփոխակների ընտրութիւն անենք ամեն կողմից և լոյս ընծայենք նոր փոփոխակներից այն, ինչ որ նոր է կամ տարբեր, բաց թողնելով այն՝ ինչ որ անարժէք է. օրինակ կրկնութիւն նախընթաց փոփոխակների, ուրեմն կրճատումներով, որի համար սակայն քաջ հմտութիւն անցեալ փոփոխակների ինչպէս և զգուշութիւն է պէտք։ Այս տեսակէտով մենք աւելորդ ենք համարում Տ. Զթունու Կարկառու բարբառի փոփոխակին կից գրական լեզուով թարգմանութիւնը. դժուար հասկանալի բարբառների համար պէտք է կամ ծանօթութիւններով և կամ լաւագոյն ևս կցուած բառարանով բաւականանալ։

Այնուհետև մոռանալու չէ լեզուն ու գրական արժէքը։ Հայերէնի լեզուագիտական ուսումնասիրութեան մեծ զարգ կը տայ բարբառների ուսումնասիրութիւնը, որ մեզնում անցեալ դարու վերջերից սկսուել է, ուստի ցանկալի էր Զոլանց տան

---

1. Ազգագր. Հանդէս XIII. էջ 15։
2. Անդ. XIII. էջ 16։